

**«Կենցաղային ջեռոցների, սալօջախների եւ օդաքարշ
պահարանների էկոնախագծմանը ներկայացվող պահանջների
մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի**

**2009/125/ԵՀ հրահանգը կիրարկող՝
Հանձնաժողովի 2014 թվականի**

հունվարի 14-ի թիվ 66/2014 ԿԱՆՈՆԱԿԱՐԳ (ԵՄ)

(Եվրոպական տնտեսական տարածքին առնչվող տեքստ)

ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,

հաշվի առնելով «Եվրոպական միության գործունեության մասին» պայմանագիրը,
հաշվի առնելով «Էներգասպառող եւ էներգախնայող արտադրատեսակների՝
էկոնախագծմանը ներկայացվող պահանջներ մշակելու համար շրջանակ
սահմանելու մասին» Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2009 թվականի
հոկտեմբերի 21-ի 2009/125/ԵՀ հրահանգը եւ մասնավորապես՝ դրա 15(1) հոդվածը,
2009/125/ԵՀ հրահանգի 18-րդ հոդվածում նշված խորհրդատվական ֆորումում
քննարկումներից հետո,

քանի որ՝

- 1) 2009/125/ԵՀ հրահանգով Հանձնաժողովից պահանջվում է սահմանել
էներգասպառող եւ էներգախնայող այնպիսի արտադրատեսակների
էկոնախագծմանը ներկայացվող պահանջներ, որոնք ունեն իրացման եւ
ապրանքաշրջանառության մեծ ծավալներ, նշանակալից ազդեցություն են
գործում շրջակա միջավայրի վրա եւ մեծ ներուժ ունեն նախագծումը
կատարելագործելու միջոցով շրջակա միջավայրի վրա ավելի քիչ
ազդեցություն ունենալու առումով՝ չառաջացնելով չափազանց մեծ ծախսեր.

¹ ՊՏ L 285, 31.10.2009 թ., էջ 10:

- 2) 2009/125/ԵՀ հրահանգի 16(2)(ա) հոդվածով նախատեսվում է, որ 19(3) հոդվածում նշված ընթացակարգի եւ 15(2) հոդվածով սահմանված չափորոշիչների համաձայն եւ խորհրդատվական ֆորումում քննարկումներից հետո Հանձնաժողովը պետք է անհրաժեշտության դեպքում կիրարկումն ապահովող միջոցառումներ ընդունի ջերմոցային գազերի արտանետումների ծախսարդյունավետ կրճատման մեծ հնարավորություն ընձեռող այն արտադրատեսակների համար, ինչպիսիք են կենցաղային սարքերը, ներառյալ՝ ջեռոցները, սալօջախները եւ օդաքարշ պահարանները.
- 3) Հանձնաժողովն իրականացրել է նախապատրաստական ուսումնասիրություններ կենցաղային խոհանոցային այնպիսի սարքերի տեխնիկական, բնապահպանական եւ տնտեսական հայեցակետերը վերլուծելու համար, ինչպիսիք են ջեռոցները, սալօջախները եւ օդաքարշ պահարանները: Այս ուսումնասիրությունները ներառել են Միության եւ երրորդ երկրների շահառուներին ու շահագրգիռ կողմերին, իսկ արդյունքները հասանելի են դարձվել հանրության համար.
- 4) վերոնշյալ արտադրատեսակների հիմնական բնապահպանական հայեցակետը, որը սույն կանոնակարգի նպատակների տեսանկյունից համարվել է կարեւոր, էներգասպառումն է շահագործման փուլում.
- 5) ընդհանուր էներգասպառման մեծ մասի պատճառ կարող են լինել կենցաղային խոհանոցային այնպիսի սարքերի սպասման եւ անջատված ռեժիմների գործառույթները, ինչպիսիք են ջեռոցները, սալօջախները եւ օդաքարշ պահարանները: Այդպիսի սարքերի դեպքում այդ գործառույթների մասով էներգասպառումը էներգաարդյունավետության նվազագույն պահանջների մաս է կազմում: Կենցաղային ջեռոցներին եւ սալօջախներին ներկայացվող՝ սպասման եւ անջատված ռեժիմների հետ կապված պահանջները սահմանված են «Էլեկտրական եւ էլեկտրոնային կենցաղային ու գրասենյակային սարքավորումների սպասման եւ անջատված

ռեժիմներին, ինչպես նաև ցանցային սպասմանը, էլեկտրաէներգիայի սպառմանը ներկայացվող էկոնախազձման պահանջների մասին»¹ Եվրոպական Պառլամենտի ու Խորհրդի թիվ 2005/32/ԵՀ հրահանգը կիրարկող՝ Հանձնաժողովի 2008 թվականի դեկտեմբերի 17-ի թիվ 1275/2008 (ԵՀ) կանոնակարգի էկոնախազձման պահանջների հիման վրա,

- 6) ըստ հաշվարկների՝ կենցաղային ջեռոցների, սալօջախների եւ օդաքարշ պահարանների տարեկան էներգասպառումը ԵՄ-ում 2010 թվականին կազմել է 755 ՊՋ (առաջնային էներգիայի սպառում): Եթե հատուկ միջոցառումներ չձեռնարկվեն, տարեկան էներգասպառումը, ըստ կանխատեսումների, 2020 թվականին կկազմի 779 ՊՋ: Նախապատրաստական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այդ արտադրատեսակների էներգասպառումը կարող է էապես կրճատվել:
- 7) ընդհանուր առմամբ, ակնկալվում է, որ սույն կանոնակարգով սահմանված՝ էկոնախազձման պահանջները եւ Հանձնաժողովի թիվ 65/2014 (ԵՄ) պատվիրակված կանոնակարգի² պիտակավորման պահանջները կհանգեցնեն տարեկան առաջնային էներգիայի 27 ՊՋ/տ խնայողության 2020 թվականին, որը կաճի՝ մինչեւ 2030 թվականը կազմելով 60 ՊՋ/տ:
- 8) նախապատրաստական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ 2009/125/ԵՀ հրահանգի հավելվածի 1-ին մասի 1.3 կետում նշված այլ էկոնախազձման պարամետրերին վերաբերող պահանջներն անհրաժեշտ չեն, քանի որ կենցաղային խոհանոցային այնպիսի սարքերի էլեկտրաէներգիայի եւ գազի սպառումը շահագործման փուլում, ինչպիսիք են ջեռոցները, սալօջախները եւ օդաքարշ պահարանները, ամենակարելուր բնապահպանական հայեցակետն է:

¹ ՊՏ L 339, 18.12.2008 թ., էջ 45:

² Տե՛ս սույն պաշտոնական տեղեկագրի 1-ին էջը:

- 9) սույն կանոնակարգով նախատեսվող արտադրատեսակները պետք է դարձվեն ավելի էներգաարդյունավետ՝ կիրառելով գոյություն ունեցող չարտոնագրված ծախսարդյունավետ տեխնոլոգիաները, որոնք կարող են նվազեցնել այդ արտադրատեսակների գնման եւ շահագործման հետ կապված ընդհանուր ծախսերը.
- 10) էկոնախագծմանը ներկայացվող պահանջները չպետք է ազդեցություն ունենան արտադրանքի ֆունկցիոնալության վրա վերջնական սպառողի տեսանկյունից, ինչպես նաեւ չպետք է բացասական ազդեցություն ունենան առողջության, անվտանգության կամ շրջակա միջավայրի վրա: Մասնավորապես, շահագործման փուլում էներգասպառման նվազեցման օգուտները պետք է էապես գերազանցեն արտադրության փուլում եւ օգտագործման ժամանակ շրջակա միջավայրի վրա հնարավոր ցանկացած լրացուցիչ ազդեցություն.
- 11) էկոնախագծման պահանջները պետք է ներդրվեն աստիճանաբար՝ երեք փուլով՝ արտադրողներին սույն կանոնակարգով նախատեսված արտադրատեսակների նախագծերը լրամշակելու համար բավարար ժամանակ տրամադրելու նպատակով: Այդպիսի ժամանակահատվածը չպետք է որեւէ բացասական ազդեցություն ունենա շուկայում արդեն առկա սարքավորումների ֆունկցիոնալության վրա, եւ պետք է հաշվի առնվեն վերջնական սպառողների եւ արտադրողների, մասնավորապես՝ փոքր եւ միջին ձեռնարկությունների կրած ծախսերը՝ միեւնույն ժամանակ ապահովելով սույն կանոնակարգով սահմանված նպատակների ժամանակին իրականացումը.
- 12) արտադրանքի պարամետրերը պետք է չափվեն եւ հաշվարկվեն՝ օգտագործելով հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի մեթոդներ, երբ հաշվի են առնվում համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման եւ հաշվարկման մեթոդները, ներառյալ՝ առկայության դեպքում ստանդարտացման եվրոպական այն կազմակերպությունների կողմից

ընդունված ներդաշնակեցված չափորոշիչները, որոնք թվարկված են Եվրոպական պառլամենտի և Խորհրդի 2012 թվականի հոկտեմբերի 25-ի «Եվրոպական ստանդարտացման մասին» թիվ 1025/2012 (ԵՄ) կանոնակարգի I հավելվածում¹.

- 13) 2009/125/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածին համապատասխան՝ սույն կանոնակարգով սահմանվում են համապատասխանության գնահատման կիրառելի ընթացակարգեր.
- 14) համապատասխանության ստուգումները դյուրացնելու համար արտադրողները տեխնիկական փաստաթղթերում պետք է տրամադրեն 2009/125/ԵՀ հրահանգի IV և V հավելվածներում նշված տեղեկություններն այնքանով, որքանով այդ տեղեկություններն առնչվում են սույն կանոնակարգով սահմանված պահանջներին.
- 15) արդար մրցակցություն ապահովելու համար ու նախատեսված էներգախնայողությանը հասնելու և սպառողներին արտադրատեսակների էներգաարդյունավետության մասին ճշգրիտ տեղեկություններ տրամադրելու նպատակով սույն կանոնակարգով պետք է հստակ սահմանվի, որ ազգային շուկայի վերահսկողության մարմինների համար սահմանված թույլատրելի շեղումները, էներգախնայող և էներգասպառող արտադրանքի կոնկրետ մոդելի համապատասխանությունը սույն կանոնակարգին պարզելու նպատակով ֆիզիկական և մեխանիկական հատկությունների ստուգումներ անցկացնելիս, չպետք է արտադրողներին առիթ տան ներկայացնելու մոդելի ավելի շահավետ արդյունավետություն, քան կարող է հիմնավորվել արտադրանքի տեխնիկական փաստաթղթերում ներկայացված չափումներով և հաշվարկներով.
- 16) ի լրումն սույն կանոնակարգով սահմանված պարտադիր իրավական ուժ ունեցող պահանջների՝ պետք է սահմանվեն շուկայում առկա ամենաարդյունավետ սարքերի կողմնորոշիչ հենանիշները՝ ապահովելու

համար սույն կանոնակարգով նախատեսված արտադրանքի շահագործման ժամկետի ընթացքում դրանց էկոլոգիական ցուցանիշների մասով ամենահամապատասխան էկոլոգիական հայեցակետերի վերաբերյալ տեղեկությունների հեշտ հասանելիությունը եւ մատչելիությունը.

- 17) նպատակահարմար է նախատեսել սույն կանոնակարգի դրույթների վերանայում՝ հաշվի առնելով տեխնոլոգիական առաջընթացը եւ մասնավորապես՝ ջեռոցների էներգաարդյունավետության որոշման համար կիրառվող մոտեցման արդյունավետությունը եւ նպատակահարմարությունը.
- 18) սույն կանոնակարգով նախատեսված միջոցառումները համապատասխանում են Կոմիտեի՝ 2009/125/ԵՀ հրահանգի 19(1) հոդվածով սահմանված եզրակացությանը,

ԸՆԴՈՒՆԵՑ ՍՈՒՅՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ.

Հոդված 1

Կարգավորման առարկան եւ գործողության ոլորտը

1. Սույն կանոնակարգով սահմանվում են էկոնախագծման պահանջներ՝ կենցաղային ջեռոցները (այդ թվում՝ գազօջախների մեջ ներկառուցվելու դեպքում), կենցաղային սալօջախները եւ կենցաղային օդաքարշ պահարանները (այդ թվում՝ ոչ կենցաղային նպատակներով վաճառված լինելու դեպքում) շուկայահանելու եւ շահագործման հանձնելու նկատմամբ:
2. Սույն կանոնակարգը չի կիրառվում հետեւյալի նկատմամբ՝
 - ա) էլեկտրաէներգիայից կամ գազից տարբերվող էներգիայի աղբյուրներ օգտագործող սարքեր.

- բ) սարքեր, որոնք ունեն «միկրոալիքային տաքացման» գործառույթ.
- գ) փոքր ջեռոցներ.
- դ) շարժական ջեռոցներ.
- ե) ջերմակուտակիչ ջեռոցներ.
- զ) ջեռոցներ, որոնք տաքացվում են գոլորշիով որպես առաջնային տաքացման գործառույթ.
- է) ծածկված գազի այրիչներ սալօջախներում.
- ը) դրսում սնունդ պատրաստելու համար նախատեսված սարքեր.
- թ) միայն «երրորդ ընտանիքի» գազերով (պրոպան եւ բութան) օգտագործման համար նախատեսված սարքեր.
- ժ) գրիլներ:

Հոդված 2

Սահմանումները

Ի լրումն 2009/125/ԵՀ հրահանգի 2-րդ հոդվածով սահմանված սահմանումների՝ սույն կանոնակարգի նպատակներով կիրառվում են հետեւյալ սահմանումները.

- 1) «ջեռոց» նշանակում է սարք կամ սարքի մի մաս, որը ներառում է մեկ կամ մի քանի խցիկներ, որոնք օգտագործում են էլեկտրաէներգիա եւ (կամ) գազ, որի մեջ սնունդը պատրաստվում է սովորական կամ օդափոխիչի կիրառմամբ տաքացման ռեժիմով.
- 2) «խցիկ» նշանակում է փակ բաժին, որտեղ ջերմաստիճանը կարող է վերահսկվել սննդի պատրաստման համար.
- 3) «բազմախցիկ ջեռոց» նշանակում է երկու կամ ավելի խցիկներով ջեռոց, որոնցից յուրաքանչյուրը տաքացվում է առանձին.

- 4) «փոքր ջեռոց» նշանակում է ջեռոց, որի մեջ բոլոր խցիկներն ունեն 250 մմ-ից պակաս լայնություն եւ խորություն կամ 120 մմ-ից պակաս բարձրություն.
- 5) «շարժական ջեռոց» նշանակում է 18 կգ-ից պակաս զանգված ունեցող ջեռոց՝ պայմանով, որ այն նախատեսված չէ ներկառուցման համար.
- 6) «միկրոալիքային տաքացում» նշանակում է սննդի տաքացում էլեկտրամագնիսական էներգիայի օգտագործմամբ.
- 7) «սովորական ռեժիմ» նշանակում է ջեռոցի խցիկում տաքացված օդի շրջանառության համար միայն բնական կոնվեկցիայի օգտագործմամբ ջեռոցի շահագործման ռեժիմ.
- 8) «օդափոխիչի կիրառմամբ տաքացման ռեժիմ» նշանակում է ռեժիմ, որի դեպքում ջեռոցի խցիկում ներկառուցված օդափոխիչի միջոցով շրջանառվում է տաքացված օդ.
- 9) «ցիկլ» նշանակում է որոշակի պայմաններում ջեռոցի խցիկում ստանդարտացված բեռնվածության տաքացման ժամանակահատված.
- 10) «գազօջախ» նշանակում է ջեռոցից եւ սալօջախից բաղկացած սարք, որն օգտագործում է գազ կամ էլեկտրաէներգիա.
- 11) «շահագործման ռեժիմ» նշանակում է ջեռոցի կամ սալօջախի վիճակն օգտագործման ընթացքում.
- 12) «տաքացման աղբյուր» նշանակում է ջեռոցը կամ սալօջախը տաքացնելու համար հիմնական էներգիայի ձեւ.
- 13) «էլեկտրական սալօջախ» նշանակում է սարք կամ սարքի մաս, որը ներառում է պատրաստման մեկ կամ մի քանի գոտի եւ (կամ) տարածք, ներառյալ՝ կառավարման վահանակը, եւ որը տաքացվում է էլեկտրաէներգիայի միջոցով.
- 14) «գազի սալօջախ» նշանակում է սարք կամ սարքի մաս, որը ներառում է պատրաստման մեկ կամ մի քանի գոտի, ներառյալ՝ կառավարման

- վահանակը, եւ որը տաքացվում է 1.16 կՎտ նվազագույն հզորությամբ գազի այրիչներով.
- 15) «սալօջախ» նշանակում է էլեկտրական սալօջախ, գազի սալօջախ կամ համակցված սալօջախ.
- 16) «ծածկված գազի այրիչներ» նշանակում է փակ կամ հերմետիկ գազօջախի այրիչներ՝ ծածկված գերամուր ապակիով կամ կերամիկական ծածկույթով, որը ձեւավորում է պատրաստման համար նախատեսված հարթ, ամբողջական մակերեսույթ.
- 17) «համակցված սալօջախ» նշանակում է սարք, որն ունի էլեկտրաէներգիայով տաքացվող՝ պատրաստման մեկ կամ մի քանի գոտի կամ տարածք եւ գազի այրիչներով տաքացվող՝ պատրաստման մեկ կամ մի քանի գոտի.
- 18) «պատրաստման գոտի» նշանակում է սալօջախի առնվազն 100 մմ տրամագծով մաս, որտեղ տեղադրվում եւ տաքացվում է սննդի պատրաստման համար նախատեսված սպասքը՝ յուրաքանչյուր անգամ տաքացնելով ոչ ավելի, քան սննդի պատրաստման համար նախատեսված մեկ կտոր սպասք. պատրաստման գոտու տարածքը կարող է տեսանելի կերպով նշված լինել սալօջախի մակերեսույթի վրա.
- 19) «պատրաստման տարածք» նշանակում է էլեկտրական սալօջախի տարածքի մաս, որը տաքացվում է մագնիսական դաշտի ինդուկցիայի միջոցով, որտեղ սննդի պատրաստման համար նախատեսված սպասքը տեղադրվում է տաքացման համար առանց սննդի պատրաստման համար նախատեսված սպասքի մասին տեսանելի նշման, եւ որտեղ միաժամանակ կարող է օգտագործվել սննդի պատրաստման համար նախատեսված սպասքի մեկից ավելի կտոր.
- 20) «օդաքարշ պահարան» նշանակում է սարք, որը գործարկվում է դրա կողմից վերահսկվող շարժիչով, նախատեսված է սալօջախի վրայից աղտոտված օդի հավաքման համար, կամ որը ներառում է հետադարձ քաշանքի համակարգ,

որը նախատեսված է խոհանոցային գազօջախներին, սալօջախներին եւ խոհանոցային նմանատիպ արտադրատեսակներին կից ներկառուցման համար, եւ որը քաշում է գոլորշին ներսի օդաքաշ խողովակ.

- 21) «պատրաստման ընթացքում ավտոմատ աշխատանքի ռեժիմ» նշանակում է վիճակ, որի դեպքում օդաքարշ պահարանի օդի հոսքը պատրաստման ընթացքում ավտոմատ կերպով վերահսկվում է սենսորի (սենսորների) միջոցով, այդ թվում՝ խոնավության, ջերմաստիճանի եւ այլնի մասով.
- 22) «ամբողջությամբ ավտոմատ օդաքարշ պահարան» նշանակում է օդաքարշ պահարան, որում օդի հոսքը եւ (կամ) մյուս գործառույթներն ավտոմատ կերպով վերահսկվում են սենսորի (սենսորների) միջոցով 24 ժամվա ընթացքում, ներառյալ՝ պատրաստման ժամանակահատվածը.
- 23) «առավելագույն արդյունավետության կետ (ԱԱԿ)» նշանակում է օդաքարշ պահարանի՝ հիդրոգազադինամիկայի առավելագույն արդյունավետությամբ շահագործման կետ(ՀԳԴԱ_{օդաքարշ պահարան}).
- 24) «միջին լուսավորվածություն (E_{միջին})» նշանակում է օդաքարշ պահարանի լուսավորման համակարգով պատրաստման մակերեսային ապահովվող միջին լուսավորվածություն, որը չափվում է լյուքսով.
- 25) «անջատված ռեժիմ» նշանակում է վիճակ, որի դեպքում սարքավորումը միացված է էլեկտրասնուցման աղբյուրին, սակայն չի կատարում որեւէ գործառույթ, կամ միայն ցույց է տալիս, որ գտնվում է անջատված ռեժիմում, կամ կատարում է միայն գործառույթներ, որոնք նախատեսված են Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2004/108/ԵՀ հրահանգի¹ համաձայն համաձայն էլեկտրամագնիսական համատեղելիությունն ապահովելու համար.

¹ «Էլեկտրամագնիսական համապատասխանությանը վերաբերող՝ անդամ պետությունների օրենքների մոտարկման մասին» եւ թիվ 89/336/ԵՏՀ հրահանգն ուժը կորցրած ճանաչող՝ Եվրոպական պառլամենտի եւ Խորհրդի 2004 թվականի դեկտեմբերի 15-ի թիվ 2004/108/ԵՀ հրահանգ (ՊՏ L 390, 31.12.2004 թ., էջ 24):

- 26) «սպասման ռեժիմ» նշանակում է վիճակ, որի դեպքում սարքավորումը միացված է էլեկտրասնուցման աղբյուրին, նախատեսված ձեռով աշխատելու համար ծախսում է էլեկտրասնուցման աղբյուրից ստացվող էներգիան եւ ապահովում է միայն վերաակտիվացման գործառույթ կամ վերաակտիվացման գործառույթ եւ միայն միացված վերաակտիվացման գործառույթի ցուցանշում, եւ (կամ) տեղեկությունների կամ կարգավիճակի ցուցադրում, ինչը կարող է շարունակվել անորոշ ժամանակ.
- 27) «վերաակտիվացման գործառույթ» նշանակում է գործառույթ, որը դյուրացնում է այլ ռեժիմների ակտիվացումը, ներառյալ՝ ակտիվ ռեժիմը՝ հեռակառավարման անջատիչի միջոցով, այդ թվում՝ հեռակառավարման վահանակը, ներքին սենսորը կամ լրացուցիչ գործառույթների, այդ թվում՝ հիմնական գործառույթի կատարումն ապահովող ժամաչափը.
- 28) «տեղեկությունների կամ կարգավիճակի ցուցադրում» նշանակում է շարունակական գործառույթ, որը տեղեկություններ է տրամադրում սարքավորման մասին կամ ցույց է տալիս դրա կարգավիճակը ցուցադրիչի, այդ թվում՝ ժամացույցների վրա,
- 29) «վերջնական սպառող» նշանակում է սպառող, որը գնում է կամ ակնկալվում է, որ կգնի արտադրանքը.
- 30) «համարժեք մոդել» նշանակում է մոդել, որը շուկայահանվել է նույն տեխնիկական պարամետրերով, ինչ միեւնույն արտադրողի կամ ներմուծողի կողմից առետրային ծածկագրային այլ համարով շուկայահանված մեկ այլ մոդել:

Հոդված 3

Էկոնախագծման պահանջները եւ ժամանակացույցը

1. Կենցաղային ջեռոցներին, սալօջախներին եւ օդաքարշ պահարաններին ներկայացվող էկոնախագծման պահանջները, ներառյալ՝ ժամկետները սահմանված են I հավելվածում:
2. Էկոնախագծման պահանջներին համապատասխանությունը չափվում եւ հաշվարկվում է II հավելվածով սահմանված մեթոդներին համապատասխան:

Հոդված 4

Համապատասխանության գնահատումը

1. 2009/125/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածում նշված համապատասխանության գնահատման ընթացակարգն այդ հրահանգի IV հավելվածով սահմանված նախագծման աշխատանքների հսկողության ներքին համակարգն է կամ այդ հրահանգի V հավելվածով սահմանված կառավարման համակարգը:
2. 2009/125/ԵՀ հրահանգի 8-րդ հոդվածի համաձայն՝ համապատասխանության գնահատման նպատակներով տեխնիկական փաստաթղթերի փաթեթը պարունակում է սույն կանոնակարգի II հավելվածով սահմանված հաշվարկման օրինակ:
3. Եթե մոդելի վերաբերյալ տեխնիկական փաստաթղթերում ներառված տեղեկությունները ստացվել են նախագծման հիման վրա կատարված հաշվարկի արդյունքում կամ համարժեք այլ սարքերից արտարկման միջոցով կամ այդ երկու միջոցով էլ, ապա տեխնիկական փաստաթղթերը ներառում են այդ հաշվարկների կամ արտարկումների կամ այդ երկուսի վերաբերյալ մանրամասները, ինչպես նաեւ կատարված հաշվարկների ճշգրտությունն ստուգելու համար արտադրողների կողմից կատարված ստուգումների մանրամասները: Նման դեպքերում տեխնիկական փաստաթղթերը նաեւ ներառում են բոլոր մյուս

համարժեք մոդելների ցանկը, եթե տեխնիկական փաստաթղթերում պարունակվող տեղեկություններն ստացվել են նույն հիմքով:

4. Եթե արտադրողը կամ ներմուծողը շուկայահանում է համարժեք մոդելներ, ապա արտադրողը կամ ներմուծողը ներառում է բոլոր մյուս համարժեք մոդելների ցանկը:

Հոդված 5

Շուկայի վերահսկողության նպատակներով իրականացվող ստուգման ընթացակարգը

Սույն կանոնակարգի I հավելվածով սահմանված պահանջներին համապատասխանության համար 2009/125/ԵՀ հրահանգի 3(2) հոդվածում նշված՝ շուկայի վերահսկողության ստուգումներն իրականացնելիս անդամ պետությունների լիազորված մարմինները կիրառում են սույն կանոնակարգի III հավելվածում նկարագրված ստուգման ընթացակարգը:

Հոդված 6

Կողմնորոշիչ հենանիշերը

Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու պահին շուկայում առկա ամենաարդյունավետ սարքերի մասով կողմնորոշիչ հենանիշերը սահմանված են IV հավելվածում:

Հոդված 7

Վերանայումը

Հանձնաժողովը վերանայում է սույն կանոնակարգը տեխնոլոգիական առաջընթացի տեսանկյունից եւ տվյալ վերանայման արդյունքները ներկայացնում

Խորհրդատվական ֆորում ոչ ուշ, քան սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելուց հետո՝ 7 տարվա ընթացքում: Վերանայման արդյունքում, ի թիվս այլնի, գնահատվում են սարքերի վերականգնումը եւ վերամշակումը բարելավելու համար հնարավոր պահանջները, երկարատեւությանը եւ շահագործման ժամկետին ներկայացվող պահանջները, մասնագիտական եւ առետրային սարքերի ներառումը եւ ծխի ու հոտի հեռացմանը ներկայացվող պահանջները:

Հոդված 8

Ուժի մեջ մտնելը եւ կիրառումը

1. Սույն կանոնակարգն ուժի մեջ է մտնում Եվրոպական Միության պաշտոնական տեղեկագրում դրա հրապարակմանը հաջորդող քսաներորդ օրը:

2. Այն կիրառվում է ուժի մեջ մտնելուց 1 տարի հետո:

Սույն կանոնակարգն ամբողջությամբ պարտադիր է անմիջականորեն կիրառելի է բոլոր անդամ պետություններում:

Կատարված է Բրյուսելում 2014 թվականի հունվարի 14-ին:

Հանձնաժողովի կողմից՝

Նախագահ

Ժոզե Մանուել ԲԱՂՈՋՈՒ

ՀԱՎԵԼՎԱԾ I

Էկոնախագծմանը ներկայացվող պահանջները

1. ԷՆԵՐԳԱԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆԸ, ՕԴԻ ՀՈՍՔԻՆ ԵՒ ԼՈՒՍԱՎՈՐՎԱԾՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

1.1. Կենցաղային ջեռոցների համար

Կենցաղային ջեռոցների խցիկները (այդ թվում՝ գազօջախների մեջ ներկառուցվելու դեպքում) համապատասխանում են 1-ին աղյուսակում նշված՝ էներգաարդյունավետության ինդեքսի սահմանաչափերին:

Աղյուսակ 1

Էներգաարդյունավետության ինդեքսի սահմանաչափերը

Կենցաղային ջեռոցների խցիկների համար (ԷԱԻ_{խցիկ})

	Կենցաղային էլեկտրական եւ գազի ջեռոց
Գործողության մեջ մտնելուց 1 տարի հետո	ԷԱԻ _{խցիկ} < 146
Գործողության մեջ մտնելուց 2 տարի հետո	ԷՆԻ _{խցիկ} < 121
Գործողության մեջ մտնելուց 5 տարի հետո	ԷԱԻ _{խցիկ} < 96

Գործողության մեջ մտնելուց 5 տարի հետո բազմախցիկ ջեռոցների դեպքում(այդ թվում՝ գազօջախների մեջ ներկառուցվելու դեպքում) խցիկներից առնվազն մեկը պետք է համապատասխանի 1-ին աղյուսակում նշված առավելագույն էներգաարդյունավետության ինդեքսին՝ համապատասխանաբար գործողության մեջ մտնելուց 5 տարի հետո, մինչդեռ մյուս խցիկները պետք է համապատասխանեն 1-ին աղյուսակում նշված առավելագույն էներգաարդյունավետության ինդեքսին՝ համապատասխանաբար գործողության մեջ մտնելուց 2 տարի հետո:

1.2. Կենցաղային սալօջախների համար

Կենցաղային սալօջախները պետք է ունենան առավելագույն էներգասպառման սահմանաչափեր՝ էլեկտրական սալօջախների համար (ԷՍ_{էլեկտրական սալօջախ}), եւ նվազագույն էներգաարդյունավետության սահմանաչափեր՝ գազով աշխատող սալօջախների համար (ԷԱ_{գազի սալօջախ}), ինչպես նշված է 2-րդ աղյուսակում:

Աղյուսակ 2

Էներգաարդյունավետության ցուցանիշների սահմանաչափերը կենցաղային սալօջախների համար (ԷՍ_{էլեկտրական սալօջախ} եւ ԷԱ_{գազի սալօջախ})

	Էլեկտրական սալօջախ (ԷՍ _{էլեկտրական սալօջախ} Վտժ/կգ-ով)	Գազի սալօջախ (ԷԱ _{գազի սալօջախ} %- ով)
Գործողության մեջ մտնելուց 1 տարի հետո	ԷՍ _{էլեկտրական սալօջախ} < 210	ԷԱ _{գազի սալօջախ} > 53
Գործողության մեջ մտնելուց 3 տարի հետո	ԷՍ _{էլեկտրական սալօջախ} < 200	ԷԱ _{գազի սալօջախ} > 54
Գործողության մեջ մտնելուց 5 տարի հետո	ԷՍ _{էլեկտրական սալօջախ} < 195	ԷԱ _{գազի սալօջախ} > 55

1.3. Կենցաղային օդաքարշ պահարանների համար

1.3.1. Էներգաարդյունավետության ինդեքս (ԷԱԻ_{օդաքարշ պահարան}) եւ հիդրոգազադինամիկայի արդյունավետություն (ՀԳԴԱ_{օդաքարշ պահարան})

Կենցաղային օդաքարշ պահարանները պետք է ունեն առավելագույն ԷԱԻ_{օդաքարշ պահարան} եւ նվազագույն ՀԳԴԱ_{օդաքարշ պահարան} սահմանաչափեր, ինչպես նշված է 3-րդ աղյուսակում:

Աղյուսակ 3

**Էներգաարդյունավետության ինդեքս (EԱԻ_{օդաքարշ պահարան}) եւ
հիդրոգազադինամիկայի արդյունավետություն (ՀԳԴԱ_{օդաքարշ պահարան})
կենցաղային օդաքարշ պահարանների համար**

	ԷԱԻ _{օդաքարշ պահարան}	ՀԳԴԱ _{օդաքարշ պահարան}
Գործողության մեջ մտնելուց 1 տարի հետո	ԷԱԻ _{օդաքարշ պահարան} < 120	ՀԳԴԱ _{օդաքարշ պահարան} > 3
Գործողության մեջ մտնելուց 3 տարի հետո	ԷԱԻ _{օդաքարշ պահարան} < 110	ՀԳԴԱ _{օդաքարշ պահարան} > 5
Գործողության մեջ մտնելուց 5 տարի հետո	ԷԱԻ _{օդաքարշ պահարան} < 100	ՀԳԴԱ _{օդաքարշ պահարան} > 8

1.3.2. Օդի հոսքը

Գործողության մեջ մտնելուց 1 տարի հետո կենցաղային օդաքարշ պահարանները, որոնք առկա կարգավորումներից որեւէ մեկում ունեն 650 մ³/ժ-ից բարձր առավելագույն օդի հոսք, պետք է ժամանակի ընթացքում ավտոմատ կերպով անցնեն 650 մ³/ժ-ին հավասար կամ դրանից պակաս օդի հոսքի էսահմանաչափ ժամանակում, ինչպես սահմանված է 2-րդ աղյուսակում:

1.3.3. Ցածր էներգասպառման ռեժիմներ՝ կենցաղային օդաքարշ պահարանների համար

1) Գործողության մեջ մտնելուց 18 ամիս հետո.

- էներգասպառումը «անջատված ռեժիմում»՝ էներգասպառումը «անջատված ռեժիմի» ցանկացած վիճակում չպետք է գերազանցի 1.00 Վտ-ը.
- էներգասպառումը «սպասման ռեժիմում (ռեժիմներում)»՝
- ցանկացած վիճակում էներգասպառումը միայն վերաակտիվացման գործառույթի ապահովման պարագայում կամ վերաակտիվացման

գործառույթի եւ միայն միացված վերաակտիվացման գործառույթի ցուցանշման ապահովման պարագայում չպետք է գերազանցի 1.00 Վտ-ը.

- ցանկացած վիճակում սարքավորումների էներգասպառումը միայն տեղեկությունների կամ կարգավիճակի ցուցադրման պարագայում կամ միայն վերաակտիվացման գործառույթի եւ տեղեկությունների կամ կարգավիճակի ցուցադրման համակցության ապահովման պարագայում չպետք է գերազանցի 2.00 Վտ-ը.
- «անջատված ռեժիմի» եւ (կամ) «սպասման ռեժիմի» առկայությունը. կենցաղային օդաքարշ պահարանները պետք է ապահովեն «անջատված ռեժիմ» եւ (կամ) «սպասման ռեժիմ» եւ (կամ) մեկ ուրիշ վիճակ, որի դեպքում չեն գերազանցվում «անջատված ռեժիմում» եւ (կամ) «սպասման ռեժիմում» էներգասպառմանը ներկայացվող կիրառելի պահանջները, երբ սարքավորումը միացված է էլեկտրասնուցման աղբյուրին:

2) Գործողության մեջ մտնելուց 3 տարի եւ վեց ամիս հետո.

- էներգասպառումը «անջատված ռեժիմում»՝ էներգասպառումը «անջատված ռեժիմի» ցանկացած վիճակում չպետք է գերազանցի 0.50 Վտ-ը.
- էներգասպառումը «սպասման ռեժիմում (ռեժիմներում)»՝ ցանկացած վիճակում սարքավորումների էներգասպառումը միայն վերաակտիվացման գործառույթի ապահովման պարագայում կամ վերաակտիվացման գործառույթի եւ միայն միացված վերաակտիվացման գործառույթի ցուցանշման ապահովման պարագայում չպետք է գերազանցի 0.50 Վտ-ը:

Ցանկացած վիճակում սարքավորումների էներգասպառումը միայն տեղեկությունների կամ կարգավիճակի ցուցադրման կամ միայն

վերաակտիվացման գործառույթի եւ տեղեկությունների կամ կարգավիճակի ցուցադրման համակցության ապահովման պարագայում չպետք է գերազանցի 1.00 Վտ-ը.

- հզորության կառավարում. երբ կենցաղային օդաքարշ պահարանները չեն ապահովում հիմնական գործառույթի կատարումը, կամ երբ այլ էներգասպառող արտադրատեսակ(ներ) կախված չէ(չեն) դրա գործառույթից, ապա սարքավորումը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա չի համապատասխանում նպատակային օգտագործմանը, պետք է ապահովի էներգասպառման կառավարման գործառույթի հնարավորություն կամ նմանատիպ գործառույթ, որի միջոցով սարքավորումը դրա նպատակային օգտագործմանը համապատասխանող հնարավոր ամենակարճ ժամանակահատվածից հետո ավտոմատ կերպով անցնում է՝
- «սպասման ռեժիմի», կամ
- «անջատված ռեժիմի», կամ
- մեկ ուրիշ վիճակի, որի դեպքում չեն գերազանցվում էներգասպառմանը ներկայացվող կիրառելի պահանջները «անջատված ռեժիմում» եւ (կամ) «սպասման ռեժիմում», երբ սարքավորումը միացված է էլեկտրասնուցման աղբյուրին.
- էներգասպառման կառավարման գործառույթը պետք է ակտիվացվի նախքան սարքավորման առաքումը.
- պատրաստման ընթացքում ավտոմատ աշխատանքի ռեժիմ ունեցող օդաքարշ պահարանների եւ ամբողջությամբ ավտոմատ օդաքարշ պահարանների դեպքում սպասման ժամանակը, որից հետո արտադրանքն ավտոմատ կերպով անցնում է նախորդ կետում նշված ռեժիմների եւ վիճակների, պետք է շարժիչի եւ լույսի ավտոմատ կամ ձեռքով անջատումից հետո կազմի մեկ րոպե:

1.3.4. Լուսավորման համակարգի լուսավորվածությունը

Գործողության մեջ մտնելուց 1 տարի հետո այն օդաքարշ պահարանների դեպքում, որոնք ապահովում են պատրաստման մակերեսային լուսավորում, պատրաստման մակերեսային լուսավորման համակարգի միջին լուսավորվածությունը ($E_{միջին}$) պետք է ստանդարտ պայմաններում չափելիս լինի 40 լյուքսից բարձր:

2. ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

Գործողության մեջ մտնելուց 1 տարի հետո արտադրանքի տեխնիկական փաստաթղթերում, հրահանգների բուկլետում եւ կենցաղային ջեռոցների, սալօջախների եւ օդաքարշ պահարանների արտադրողների, նրանց լիազորված ներկայացուցիչների կամ ներմուծողների ազատ հասանելիության կայքերում ներկայացվում են արտադրանքի մասին հետեւյալ տեղեկությունները՝

- ա) վերը նշված պահանջներին համապատասխանությունը սահմանելու համար օգտագործված չափման եւ հաշվարկման մեթոդների կրճատ անվանումը կամ դրանց հղումը.
- բ) սպառողների համար նախատեսված տեղեկություններ՝ շրջակա միջավայրի վրա պատրաստման գործընթացի ընդհանուր ազդեցությունը (օրինակ՝ էներգիայի օգտագործումը) կրճատելու համար:

Գործողության մեջ մտնելուց 1 տարի հետո տեխնիկական փաստաթղթերը եւ դրանց՝ մասնագետների համար նախատեսված մասը արտադրողների, նրանց լիազորված ներկայացուցիչների կամ ներմուծողների ազատ հասանելիության կայքերում պետք է պարունակեն սպասարկման նպատակով անվնաս քանդման վերաբերյալ տեղեկություններ եւ ապամոնտաժման համար

նախատեսված տեղեկություններ, մասնավորապես, շարժիչի, կիրառելիության դեպքում, եւ ցանկացած մարտկոցի, շահագործման ժամկետի ավարտից հետո վերամշակման, վերանորոգման եւ օգտահանման հետ կապված տեղեկություններ:

2.1. Կենցաղային ջեռոցների համար

Աղյուսակ 4

Տեղեկություններ՝ կենցաղային ջեռոցների վերաբերյալ

	Նշան	Արժեք	Միավոր
Մոդելի նույնականացում			
Ջեռոցի տեսակը			
Սարքի զանգվածը	Զ	X,X	կգ
Խցիկների թիվը		X	
Տաքացման աղբյուրը մեկ խցիկի համար (էլեկտրաէներգիա կամ գազ)			
Ծավալը մեկ խցիկի համար	Ծ	X	լ
Սովորական ռեժիմի դեպքում ցիկլի ընթացքում էլեկտրաէներգիայով տաքացվող ջեռոցի խցիկում ստանդարտացված բեռնվածությունը տաքացնելու համար պահանջվող էներգասպառումը (էլեկտրաէներգիան) մեկ խցիկի համար (էլեկտրական վերջնական էներգիա)	EU _{էլեկտրական խցիկ}	X,XX	կՎտ/ցիկլ
Օդափոխիչի կիրառմամբ տաքացման ռեժիմի դեպքում ցիկլի ընթացքում էլեկտրաէներգիայով տաքացվող ջեռոցի խցիկում ստանդարտացված բեռնվածությունը տաքացնելու համար պահանջվող էներգասպառումը մեկ խցիկի համար (էլեկտրական վերջնական էներգիա)	EU _{էլեկտրական խցիկ}	X,XX	կՎտ/ցիկլ

<p>Սովորական ռեժիմի դեպքում ցիկլի ընթացքում ջեռոցի գազով տաքացվող խցիկում ստանդարտացված բեռնվածությունը տաքացնելու համար պահանջվող էներգասպառումը մեկ խցիկի համար (գազի վերջնական էներգիա)</p>	<p>EU_{գազի խցիկ}</p>	<p>X,XX X,XX</p>	<p>ՄՋ/ցիկլ կՎտ/ցիկլ (!)</p>
<p>Օդափոխիչի կիրառմամբ տաքացման ռեժիմի դեպքում ցիկլի ընթացքում ջեռոցի գազով տաքացվող խցիկում ստանդարտացված բեռնվածությունը տաքացնելու համար պահանջվող էներգասպառումը մեկ խցիկի համար (գազի վերջնական էներգիա)</p>	<p>EU_{գազի խցիկ}</p>	<p>X,XX X,XX</p>	<p>ՄՋ/ցիկլ կՎտ/ցիկլ</p>
<p>Էներգաարդյունավետության ինդեքսը մեկ խցիկի համար</p>	<p>EU_{h խցիկ}</p>	<p>X,X</p>	

2.2. Կենցաղային սալօջախների համար

2.2.1. Կենցաղային էլեկտրական սալօջախներ

Աղյուսակ 5ա

Տեղեկություններ՝ կենցաղային էլեկտրական սալօջախների վերաբերյալ

	Նշան	Արժեք	Միավոր
Մոդելի նույնականացում			
Սալօջախի տեսակը			
Պատրաստման գոտիների եւ (կամ) տարածքների թիվը		X	
Տաքացման տեխնոլոգիա (ինդուկցիայի պատրաստման գոտիներ եւ պատրաստման տարածքներ, լուսավորված պատրաստման գոտիներ, միակտոր սալօջախ)			
Շրջանաձեւ պատրաստման գոտիների կամ տարածքի դեպքում. օգտակար մակերեսային մակերեսի տրամագիծը՝ էլեկտրաէներգիայով տաքացվող մեկ պատրաստման գոտու համար, կլորացված	∅	X,X	սմ

մինչև ամենամոտ 5 մմ-ը			
Ոչ շրջանաձև պատրաստման գոտիների կամ տարածքների համար. օգտակար մակերեսային կամ տարածքի մակերեսի երկարությունը եւ լայնությունը՝ էլեկտրաէներգիայով տաքացվող մեկ պատրաստման գոտու համար, կլորացված մինչև ամենամոտ 5 մմ-ը	Ե Լ	X,X X,X	սմ
Էներգասպառումը՝ պատրաստման գոտու կամ տարածքի համար, հաշվարկված մեկ կգ-ի համար	ԷՍ _{էլեկտրական պատրաստում}	X,X	Վտժ/կգ
Սալօջախի էներգասպառումը՝ հաշվարկված մեկ կգ-ի համար	ԷՍ _{էլեկտրական սալօջախ}	X,X	Վտժ/կգ

2.2.2. Գազով տաքացվող կենցաղային սալօջախներ

Աղյուսակ 5բ

Տեղեկություններ՝ գազով տաքացվող կենցաղային սալօջախների վերաբերյալ

	Նշան	Արժեք	Միավոր
Մոդելի նույնականացում			
Սալօջախի տեսակը			
Գազի այրիչների թիվը		X	
Էներգաարդյունավետությունը՝ մեկ գազի այրիչի համար	ԷԱ _{գազի այրիչ}	X,X	
Էներգաարդյունավետությունը՝ գազի սալօջախի համար	ԷԱ _{գազի սալօջախ}	X,X	

2.2.3. Կենցաղային համակցված գազի եւ էլեկտրական սալօջախներ

Աղյուսակ 5գ

Տեղեկություններ՝ համակցված կենցաղային սալօջախների վերաբերյալ

	Նշան	Արժեք	Միավոր
Մոդելի նույնականացում			
Սալօջախի տեսակը			
Էլեկտրական պատրաստման գոտիների եւ (կամ) տարածքների թիվը		X	
Տաքացման տեխնոլոգիա (ինդուլցիայի միջոցով պատրաստման գոտիներ եւ պատրաստման տարածքներ, լուսավորված պատրաստման գոտիներ, միակտոր սալօջախներ)՝ էլեկտրական պատրաստման գոտու եւ (կամ) տարածքի համար			
Շրջանաձեւ էլեկտրական պատրաստման գոտիների համար. օգտակար մակերեսային մակերեսի տրամագիծը՝ էլեկտրաէներգիայով տաքացվող մեկ պատրաստման գոտու համար, կլորացված մինչեւ ամենամոտ 5 մմ-ը	∅	X,X	սմ
Ոչ շրջանաձեւ պատրաստման գոտիների կամ տարածքների համար. օգտակար մակերեսային կամ տարածքի մակերեսի երկարությունը եւ լայնությունը՝ էլեկտրաէներգիայով տաքացվող մեկ պատրաստման գոտու համար, կլորացված մինչեւ ամենամոտ 5 մմ-ը	Ե Լ	X,X X,X	սմ
Էներգասպառումը՝ էլեկտրական պատրաստման գոտու կամ տարածքի համար, հաշվարկված մեկ կգ-ի համար	ԷՍ _{էլեկտրական պատրաստում}	X	Վտժ/կգ
Գազի այրիչների թիվը		X	
Էներգաարդյունավետությունը՝ մեկ գազի այրիչի համար	ԷԱ _{գազի այրիչ}	X,X	

2.3. Կենցաղային օդաքարշ պահարանների վերաբերյալ

Աղյուսակ 6

Տեղեկություններ՝ կենցաղային օդաքարշ պահարանների վերաբերյալ

	Նշան	Արժեք	Միավոր
Մոդելի նույնականացում			
Տարեկան էներգասպառում	S_{EU} _{օդաքարշ պահարան}	X,X	կՎտժ/տ
Ժամանակի ավելացման գործոն	f	X,X	
Հիդրոգազադինամիկայի արդյունավետություն	ζ_{EU} _{օդաքարշ պահարան}	X,X	
Էներգաարդյունավետության ինդեքս	E_{U} _{օդաքարշ պահարան}	X,X	
Օդի հոսքի չափված արագությունն առավելագույն արդյունավետության կետում	Q_{max}	X,X	մ ³ /ժ
Օդի չափված ճնշումն առավելագույն արդյունավետության կետում	Δp_{max}	X	Պլ
Առավելագույն օդի հոսք	$Q_{առավելագույն}$	X,X	մ ³ /ժ
Չափված մուտքային էլեկտրական հզորությունն առավելագույն արդյունավետության կետում	$P_{in,max}$	X,X	Վտ
Լուսավորման համակարգի անվանական հզորությունը	P_{L}	X,X	Վտ
Պատրաստման մակերեսային վրա լուսավորման համակարգի միջին լուսավորվածությունը	$E_{միջին}$	X	լյուքս
Չափված էներգասպառումը սպասման ռեժիմում	E_s	X,XX	Վտ
Չափված էներգասպառումն անջատված ռեժիմում	E_w	X,XX	Վտ
Ձայնի հզորության մակարդակը	L_{WA}	X	դԲ

ՀԱՎԵԼՎԱԾ II

Չափումները եւ հաշվարկները

Սույն կանոնակարգի պահանջներին համապատասխանության եւ այդ համապատասխանության ստուգման նպատակներով չափումներ եւ հաշվարկներ

իրականացնելիս օգտագործվում է հուսալի, ճշգրիտ եւ վերարտադրելի մեթոդ, երբ հաշվի է առնվում համընդհանուր ճանաչում ունեցող ժամանակակից չափման եւ հաշվարկման մեթոդները, այդ թվում՝ ներդաշնակեցված չափանիշները, որոնց հղումային համարներն այդ նպատակով հրապարակվել են *Եվրոպական Միության պաշտոնական տեղեկագրում*: Դրանք պետք է համապատասխանեն սույն հավելվածում սահմանված տեխնիկական սահմանումներին, պայմաններին, հավասարումներին եւ պարամետրերին:

1. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՋԵՌՈՑՆԵՐ

Կենցաղային ջեռոցի խցիկի էներգասպառումը չափվում է մեկ ստանդարտացված ցիկլի համար, սովորական կամ օդափոխիչի կիրառմամբ տաքացման ռեժիմով՝ առկայության դեպքում՝ տաքացնելով ջրով թրջված ստանդարտացված բեռնվածությունը: Հարկավոր է ստուգել, որ փորձարկման ցիկլի ընթացքում ջեռոցի խցիկի ներսում ջերմաստիճանը հասնի թերմոստատի եւ (կամ) ջեռոցի հսկողության ցուցադրիչի սահմանված ջերմաստիճանին: Մեկ ցիկլի համար էներգասպառումը, որը համապատասխանում է ամենաարդյունավետ ռեժիմին (սովորական ռեժիմ կամ օդափոխիչի կիրառմամբ տաքացման ռեժիմ), օգտագործվում է հետեւյալ հաշվարկներում.

Կենցաղային ջեռոցի յուրաքանչյուր խցիկի համար էներգաարդյունավետության ինդեքսը (E_{UR} _{խցիկ}) հաշվարկվում է հետեւյալ բանաձեւերի համաձայն՝

Կենցաղային էլեկտրական ջեռոցների համար՝

$$E_{UR}{}_{\text{խցիկ}} = \frac{E_{U_{\text{էլեկտրական խցիկ}}}}{U_{E_{U_{\text{էլեկտրական խցիկ}}}}} \times 100$$

$$U_{E_{U_{\text{էլեկտրական խցիկ}}}} = 0,0042 \times V + 0,55 \text{ (կՎտ-ով)}$$

կենցաղային գազի ջեռոցների համար՝

$$ՀԱԻ_{\text{խցիկ}} = \frac{ՀՍ_{\text{գազի խցիկ}}}{ՍՀՍ_{\text{գազի խցիկ}}} \times 100$$

$$ՍՀՍ_{\text{գազի խցիկ}} = 0,044 \times \sigma + 3,53 \text{ (մՋ-ով),}$$

որտեղ՝

- $ՀԱԻ_{\text{խցիկ}}$ = կենցաղային ջեռոցի յուրաքանչյուր խցիկի համար էներգաարդյունավետության ինդեքսին՝ կլորացված մինչև տասնորդական նիշը,
- $ՍՀՍ_{\text{էլեկտրական խցիկ}}$ = ստանդարտ էներգասպառմանը (էլեկտրաէներգիա), որը պահանջվում է ցիկլի ընթացքում էլեկտրաէներգիայով տաքացվող կենցաղային ջեռոցի խցիկում ստանդարտացված բեռնվածությունը տաքացնելու համար՝ արտահայտված կՎտ-ով, կլորացված մինչև հարյուրերորդական նիշը,
- $ՍՀՍ_{\text{գազի խցիկ}}$ = ստանդարտ էներգասպառմանը, որը պահանջվում է ցիկլի ընթացքում կենցաղային գազի ջեռոցի խցիկում ստանդարտացված բեռնվածությունը տաքացնելու համար՝ արտահայտված ՄՋ-ով, կլորացված մինչև հարյուրերորդական նիշը,
- σ = կենցաղային ջեռոցի խցիկի ծավալը լիտրերով (L), կլորացված մինչև ամենամոտ ամբողջ թիվը,
- $ՀՍ_{\text{էլեկտրական խցիկ}}$ = էներգասպառմանը, որը պահանջվում է ցիկլի ընթացքում էլեկտրաէներգիայով տաքացվող կենցաղային ջեռոցի խցիկում ստանդարտացված բեռնվածությունը տաքացնելու համար՝ արտահայտված կՎտ-ով, կլորացված մինչև հարյուրերորդական նիշը,

- $E_{q_{aqh} \text{ խցիկ}}$ = էներգասպառմանը, որը պահանջվում է ցիկլի ընթացքում գազով տաքացվող կենցաղային ջեռոցի խցիկում ստանդարտացված բեռնվածությունը տաքացնելու համար՝ արտահայտված ՄՋ-ով, կլորացված մինչևի հարյուրերորդական նիշը:

2. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՍԱԼՕՋԱԽՆԵՐ

2.1. Կենցաղային էլեկտրական սալօջախներ

Կենցաղային էլեկտրական սալօջախի էներգասպառումը ($E_{U_{էլեկտրական սալօջախ}}$) չափվում է Վտժ-ով՝ նորմալացված չափման դեպքում տաքացված ջրի մեկ կգ-ի հաշվով (Վտժ/կգ)՝ հաշվի առնելով սննդի պատրաստման համար նախատեսված սպասքի բոլոր կտորները՝ ստանդարտացված փորձարկման պայմաններում եւ կլորացված մինչևի տասնորդական նիշը:

2.2. Կենցաղային գազի սալօջախներ

Կենցաղային սալօջախում գազի այրիչների էներգաարդյունավետությունը հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$E_{q_{aqh} \text{ այրիչ}} = \frac{E_{տեսական}}{E_{գազի \text{ այրիչ}}} \times 100,$$

որտեղ՝

- $E_{q_{aqh} \text{ այրիչ}}$ = գազի այրիչի էներգաարդյունավետությանը տոկոսով եւ կլորացված մինչևի տասնորդական նիշը,
- $E_{գազի \text{ այրիչ}}$ = սահմանված տաքացման համար ծախսվող գազի էներգատարությանը ՄՋ-ով եւ կլորացված մինչևի տասնորդական նիշը,
- $E_{տեսական}$ = սահմանված համապատասխան տաքացման դեպքում պահանջվող տեսական նվազագույն էներգիային ՄՋ-ով եւ կլորացված

մինչեւ տասնորդական նիշը:

Գազի սալօջախի էներգաարդյունավետությունը (էԱգազի սալօջախ) հաշվարկվում է որպես սալօջախի տարբեր գազի այրիչների էներգաարդյունավետության (էԱգազի այրիչ) միջին արժեք:

2.3. Կենցաղային համակցված էլեկտրական եւ գազի սալօջախներ

Կենցաղային համակցված էլեկտրական եւ գազի սալօջախները հաշվարկումների մեջ դիտարկվում են որպես առանձին սարքեր: Կենցաղային համակցված սալօջախների էլեկտրական պատրաստման գոտիները եւ պատրաստման տարածքները պետք է համապատասխանեն նախորդ 2.1 բաժնի դրույթներին, իսկ գազի այրիչներով տաքացվող պատրաստման գոտիները պետք է համապատասխանեն նախորդ 2.2 բաժնի դրույթներին:

3. ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՕԴԱՔԱՐՇ ՊԱՀԱՐԱՆՆԵՐ

3.1. Էներգաարդյունավետության ինդեքսի հաշվարկումը (էԱԻ_{օդաքարշ պահարան})

Էներգաարդյունավետության ինդեքսը (էԱԻ_{օդաքարշ պահարան}) հաշվարկվում է որպես՝

$$\text{էԱԻ}_{\text{օդաքարշ պահարան}} = \frac{S_{էԱ}^{\text{օդաքարշ պահարան}}}{S_{SUէԱ}^{\text{օդաքարշ պահարան}}} \times 100$$

եւ կլորացվում է մինչեւ տասնորդական նիշը,

որտեղ՝

— $S_{SUէԱ}^{\text{օդաքարշ պահարան}}$ = կենցաղային օդաքարշ պահարանի ստանդարտ տարեկան էներգասպառմանը՝ արտահայտված կՎտ/տ-ով, կլորացված մինչեւ տասնորդական նիշը,

- $S\xi U_{\text{օդաքարշ պահարան}}$ = կենցաղային օդաքարշ պահարանի տարեկան էներգասպառումները՝ արտահայտված կՎտ/տ-ով, կլորացված մինչև տասնորդական նիշը:

Կենցաղային օդաքարշ պահարանի տարեկան ստանդարտ էներգասպառումը ($SU\xi U_{\text{օդաքարշ պահարան}}$) հաշվարկվում է հետևյալ կերպ՝

$$SU\xi U_{\text{օդաքարշ պահարան}} = 0.55 \times (\text{Վտ}_{\text{ուս}} + \text{ՎՏ}) + 15.3,$$

որտեղ՝

- $\text{Վտ}_{\text{ուս}}$ -ը կենցաղային օդաքարշ պահարանի մուտքային էլեկտրական հզորությունն է առավելագույն արդյունավետության կետում՝ արտահայտված Վտ-ով եւ կլորացված մինչև տասնորդական նիշը,
- Վտ_l -ը պատրաստման մակերեսային վրա կենցաղային օդաքարշ պահարանի լուսավորման համակարգի անվանական մուտքային էլեկտրական հզորությունն է՝ արտահայտված Վտ-ով եւ կլորացված մինչև տասնորդական նիշը:

Կենցաղային օդաքարշ պահարանի տարեկան էներգասպառումը ($S\xi U_{\text{օդաքարշ պահարան}}$) հաշվարկվում է հետևյալ կերպ՝

- i) ամբողջությամբ ավտոմատ կենցաղային օդաքարշ պահարանների դեպքում՝

$$S\xi U_{\text{օդաքարշ պահարան}} = \left[\frac{(\text{Վտ}_{\text{ուս}} \sigma) + (\text{Վտ}_l \sigma_l)}{601000} + \frac{\xi_{\text{Հու}} (1440 - \sigma)}{2601000} + \frac{\xi_{\text{Հլ}} (1440 - \sigma)}{2601000} \right] \times 365$$

- ii) մյուս բոլոր կենցաղային օդաքարշ պահարանների դեպքում՝

$$S\xi U_{\text{օդաքարշ պահարան}} = \frac{[\text{Վտ}_{\text{ուս}} (\sigma) + \text{Վտ}_l \sigma_l]}{601000} \times 365,$$

որտեղ՝

- σ_L -ը լուսավորման օրական միջին ժամանակն է՝ ընդգրկելով ($\sigma_L = 120$),
- σ_H -ը կենցաղային օդաքարշ պահարանների շահագործման օրական միջին ժամանակն է՝ ընդգրկելով ($t_H = 60$),
- $\xi_{\text{ՀԱ}}$ -ն կենցաղային օդաքարշ պահարանի՝ անջատված ռեժիմում մուտքային էլեկտրական հզորությունն է՝ արտահայտված Վտ-ով եւ կլորացված մինչեւ հարյուրերորդական նիշը,
- $\xi_{\text{ՀՄ}}$ -ը կենցաղային օդաքարշ պահարանի՝ սպասման ռեժիմում մուտքային էլեկտրական հզորությունն է՝ արտահայտված Վտ-ով եւ կլորացված մինչեւ հարյուրերորդական նիշը,
- q -ն ժամանակի ավելացման գործոնն է՝ հաշվարկված եւ կլորացված մինչեւ տասնորդական նիշը, ինչպես օրինակ՝

$$q = 2 - (\xi_{\text{ՀՀԱ}} \text{ օդաքարշ պահարան} \times 3,6) / 100$$

3.2. Հիդրոգազադինամիկայի արդյունավետության հաշվարկումը ($\xi_{\text{ՀՀԱ}} \text{ օդաքարշ պահարան}$)

$\xi_{\text{ՀՀԱ}} \text{ օդաքարշ պահարան}$ -ը առավելագույն արդյունավետության կետում հաշվարկվում է հետեւյալ բանաձեւով եւ կլորացվում է մինչեւ տասնորդական թիվը.

$$\xi_{\text{ՀՀԱ}} \text{ օդաքարշ պահարան} = \frac{Q_{\text{ՀՀԱ}}}{3600 \cdot V_{\text{ՀՀԱ}}} \times 100,$$

որտեղ՝

- $Q_{\text{ՀՀԱ}}$ -ը կենցաղային օդաքարշ պահարանի հոսքի արագությունն է առավելագույն արդյունավետության կետում՝ արտահայտված մ³/ժ-ով եւ

կլորացված մինչեւ տասնորդական նիշը,

- $\Delta_{\text{սս}}$ -ը կենցաղային օդաքարշ պահարանի ստատիկ ճնշման տարբերությունն է առավելագույն արդյունավետության կետում՝ արտահայտված Պլ-ով եւ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը,
- $\Delta_{\text{տս}}$ -ը կենցաղային օդաքարշ պահարանի մուտքային էլեկտրական հզորությունն է առավելագույն արդյունավետության կետում՝ արտահայտված Վտ-ով եւ կլորացված մինչեւ տասնորդական նիշը:

3.3. Արտանետվող օդի սահմանափակման մասով հաշվարկը

3.3.1. Կենցաղային օդաքարշ պահարանները, որոնք առկա կարգավորումներից որեւէ մեկում ունեն 650 մ³/ժ-ից բարձր առավելագույն օդի հոսք, պետք է $\sigma_{\text{սահմանաչափ}}$ ժամանակի ընթացքում ավտոմատ կերպով անցնեն 650 մ³/ժ-ին հավասար կամ դրանից քիչ օդի հոսքի: Սա 100 մ³ ծավալով օդը 650 մ³/ժ-ից բարձր օդի հոսքով աշխատող կենցաղային օդաքարշ պահարանի կողմից դուրս մղելու ժամանակահատվածն է նախքան ավտոմատ կերպով 650 մ³/ժ կամ դրանից պակաս օդի հոսքի անցնելը: Այն հաշվարկվում, արտահայտվում է բոլորներով եւ կլորացվում մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը որպես՝

$$\sigma_{\text{սահմանաչափ}} = \frac{6000^3}{Q_{\text{առավելագույն}}}^1,$$

¹ Տե՛ս $\sigma = \int_0^{\sigma} \frac{Q_{\text{առավելագույն}}}{60} x dt$, որը կարող է կրճատվել մինչեւ $\sigma_{\text{սահմանաչափ}} = \frac{\sigma_{\text{առավելագույն}}}{Q_{\text{առավելագույն}}} \times 60$,

որտեղ՝

— $\sigma_{\text{առավելագույն}}$ -ը դուրս մղման ենթակա օդի առավելագույն ծավալն է՝ սահմանված 100 մ³,

— $Q_{\text{առավելագույն}}$ -ն օդաքարշ պահարանի առավելագույն օդի հոսքն է, ներառյալ՝ ինտենսիվ կամ արագացման ռեժիմը, առկայության դեպքում,

— σ -ն ժամանակն է՝ արտահայտված բոլորներով եւ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը,

— dt -ն ընդհանուր ժամանակն է նախքան 100 մ³ օդի ծավալին հասնելը,

— $\sigma_{\text{սահմանաչափ}}$ -ը, արտահայտված բոլորներով եւ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը, 100 մ³ ծավալով օդ դուրս մղելու համար անհրաժեշտ ժամանակն է:

որտեղ՝

— Չափավելագույն-ը կենցաղային օդաքարշ պահարանի առավելագույն օդի հոսքն է, ներառյալ՝ առկայության դեպքում ինտենսիվ/արագացման ռեժիմը՝ մ³/ժ-ով եւ կլորացված մինչեւ տասնորդական նիշը:

Ձեռքով անջատման կամ սարքի օդի հոսքը 650 մ³/ժ-ից ցածր կամ դրան հավասար արժեքի հասցնող կարգավորման հնարավորությունը, որպես այդպիսին, չի համարվում սույն պահանջը բավարարող:

3.3.2. Պատրաստման ընթացքում ավտոմատ աշխատանքի ռեժիմով կենցաղային օդաքարշ պահարանների դեպքում՝

— ավտոմատ աշխատանքի ռեժիմի ակտիվացումը պետք է հնարավոր լինի միայն օգտագործողի կողմից պահարանի վրա կամ այլ կերպ ձեռքով կառավարման միջոցով.

— ավտոմատ աշխատանքի ռեժիմը պետք է անցնի ձեռքով կառավարման ավտոմատ աշխատանքի գործառույթի միջոցով շարժիչն անջատվելուց ամենաուշը 10 րոպե հետո:

3.4. Լուսավորման համակարգի լուսավորվածությունը ($E_{միջին}$)

Պատրաստման մակերեսային վրա լուսավորման համակարգի միջին լուսավորվածությունը ($E_{միջին}$) չափվում է ստանդարտ պայմաններում լյուքսով եւ կլորացվում մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը:

3.5. Աղմուկը

Աղմուկի արժեքը (դԲ-ով) չափվում է որպես կենցաղային օդաքարշ պահարանի A կորով կշռված՝ օդային ակուստիկ ձայնի հզորության արտադրման մակարդակներ (կշռված միջին արժեք՝ L_{այ}) բնականոն օգտագործման համար ամենաբարձր կարգավորման դեպքում՝ առանց ինտենսիվ կամ արագացման ռեժիմների եւ կլորացված մինչեւ ամենամոտ ամբողջ թիվը:

*ՀԱՎԵԼՎԱԾ III***Շուկայի վերահսկողություն իրականացնող մարմինների կողմից
արտադրանքի համապատասխանությունն ստուգելու ընթացակարգը**

2009/125/ԵՀ հրահանգի 3(2) հոդվածում նշված՝ սույն կանոնակարգով սահմանված պահանջներին արտադրանքի համապատասխանությունը գնահատելու նպատակով անդամ պետությունների մարմինները կիրառում են հետևյալ ընթացակարգը.

1. Անդամ պետության մարմիններն անցկացնում են յուրաքանչյուր մոդելի համար մեկ միավորի ստուգում:
2. Մոդելը համարվում է կիրառելի պահանջներին համապատասխանող, եթե՝
 - ա) սույն կանոնակարգով պահանջվող՝ արտադրանքի մասին տեղեկություններում նշված արժեքներն ավելի բարենպաստ չեն արտադրողի համար, քան տեխնիկական փաստաթղթերում նշված արժեքները, ներառյալ՝ փորձարկումների մասին հաշվետվությունները, եւ
 - բ) 7-րդ աղյուսակում նշված թույլատրելի շեղումների կիրառմամբ համապատասխան մոդելների պարամետրերի փորձարկումը ցույց է տալիս բոլոր այդ պարամետրերի մասով համապատասխանություն:
3. Եթե 2(ա) կետում նշված արդյունքը չի ապահովվում, ապա մոդելը եւ բոլոր համարժեք մոդելները համարվում են սույն կանոնակարգին չհամապատասխանող:
4. Եթե 2(բ) կետում նշված արդյունքը չի ապահովվում, ապա անդամ պետությունների մարմինները փորձարկման համար ընտրում են նույն մոդելի երեք լրացուցիչ միավոր: Որպես այլընտրանք՝ ընտրված երեք լրացուցիչ միավորը կարող է ընտրվել մեկ կամ մի քանի տարբեր

մոդելներից, որոնք մատակարարի տեխնիկական փաստաթղթերում նշվել են որպես համարժեք արտադրանք:

5. Մոդելը համարվում է կիրառելի պահանջներին համապատասխանող, եթե 7-րդ աղյուսակում նշված համապատասխան մոդելի պարամետրերի փորձարկումը ցույց է տալիս բոլոր այդ պարամետրերի մասով համապատասխանություն:
6. Եթե 5-րդ կետում նշված արդյունքը չի ապահովվում, ապա մոդելը եւ բոլոր համարժեք մոդելները համարվում են սույն կանոնակարգի պահանջներին չհամապատասխանող: Անդամ պետությունների մարմինները փորձարկման արդյունքները եւ այլ համապատասխան տեղեկություններ տրամադրում են այլ անդամ պետությունների մարմիններին եւ Հանձնաժողովին մոդելի անհամապատասխանության վերաբերյալ որոշումը կայացնելուց հետո՝ 1 ամսվա ընթացքում:

Անդամ պետությունների մարմիններն օգտագործում են II հավելվածում սահմանված չափման եւ հաշվարկման մեթոդները:

Սույն հավելվածում սահմանված թույլատրելի շեղումները կիրառվում են միայն անդամ պետությունների մարմինների կողմից չափված պարամետրերի ստուգման նկատմամբ՝ ներկայացնելով ստուգման փորձարկումների չափման արդյունքների թույլատրելի տատանումները, եւ չեն օգտագործվում մատակարարի կողմից տեխնիկական փաստաթղթերում արժեքների սահմանման կամ այդ արժեքների մեկնաբանման ժամանակ՝ պիտակավորման դասակարգումը բարելավելու կամ ցանկացած այլ միջոցով ավելի բարձր արդյունավետություն ապահովելու նպատակով:

Աղյուսակ 7

Ստուգման ընթացքում թույլատրելի շեղումները

Չափվող պարամետրերը	Ստուգման ընթացքում թույլատրելի շեղումները
Կենցաղային ջեռոցի զանգվածը (Ջ)	Որոշված արժեքը չպետք է գերազանցի Ջ-ի հայտարարված արժեքն ավելի քան 5 %-ով:
Կենցաղային ջեռոցի խցիկի ծավալը (Ծ)	Որոշված արժեքը չպետք է Ծ-ի հայտարարված արժեքից ավելի ցածր լինի, քան 5 %-ով:
ԷՍ _{էլեկտրական խցիկ} , ԷՍ _{գազի խցիկ}	Որոշված արժեքը չպետք է գերազանցի ԷՍ _{էլեկտրական խցիկ} -ի, ԷՍ _{գազի խցիկ} -ի հայտարարված արժեքն ավելի քան 5 %-ով:
ԷՍ _{էլեկտրական սալօջախ}	Որոշված արժեքը չպետք է գերազանցի ԷՍ _{էլեկտրական սալօջախ} -ի հայտարարված արժեքն ավելի քան 5 %-ով:
ԷՍ _{գազի սալօջախ}	Որոշված արժեքը չպետք է ԷՍ _{գազի սալօջախ} -ի հայտարարված արժեքից ավելի ցածր լինի, քան 5 %-ով:
Վտ _{սսԿ} , Վտ _Լ	Որոշված արժեքը չպետք է գերազանցի Վտ _{սսԿ} -ի, Վտ _Լ -ի հայտարարված արժեքն ավելի քան 5%-ով:
Պ _{սսԿ} , ԷՀ _{սսԿ}	Որոշված արժեքը չպետք է Պ _{սսԿ} -ի, ԷՀ _{սսԿ} -ի հայտարարված արժեքից ավելի ցածր լինի, քան 5 %-ով:
Պ _{ատավելագույն}	Որոշված արժեքը չպետք է գերազանցի Պ _{ատավելագույն} -ի հայտարարված արժեքն ավելի քան 8 %-ով:
Էմիջին	Որոշված արժեքը չպետք է Էմիջին-ի հայտարարված արժեքից ավելի ցածր լինի, քան 5 %-ով:
Ձայնի հզորության մակարդակը LWA	Որոշված արժեքը չպետք է գերազանցի հայտարարված արժեքը:
ԷՀ _ս , ԷՀ _ս	ԷՀ _ս եւ ԷՀ _ս էներգասպառման որոշված արժեքը չպետք է գերազանցի հայտարարված արժեքն ավելի, քան 10%-ով: 1.00 Վտ-ից պակաս կամ դրան հավասար՝ P _o եւ P _s էներգասպառման որոշված արժեքը չպետք է գերազանցի հայտարարված արժեքն ավելի, քան 0.10 Վտ-ով:

ՀԱՎԵԼՎԱԾ IV

Կողմնորոշիչ հենանիշերը

Սույն կանոնակարգն ուժի մեջ մտնելու պահին շուկայում առկա ամենաարդյունավետ կենցաղային ջեռոցները, սալօջախները եւ օդաքարշ պահարանները դրանց էներգաարդյունավետության մասով հետեւյալն են՝

Կենցաղային ջեռոցներ	Էլեկտրական	ԷԱ _{լսցիկ} = 70,7
	Գազի	ԷԱ _{լսցիկ} = 75,4
Կենցաղային սալօջախներ	Էլեկտրական	ԷՍ _{էլեկտրական պատրաստում} = 169,3
	Գազի	ԷԱ _{գազի այրիչ} = 63,5 %
Կենցաղային օդաքարշ պահարաններ	Օդի հոսքը	ՀԳԴԱ _{օդաքարշ պահարան} = 22
	Աղմուկը	51 դԲ՝ 550 մ ³ /ժ-ի դեպքում, 57 դԲ՝ 750 մ ³ /ժ-ի դեպքում